ւանութիւնս, յետ որոյ ամայի մնացեալ անապատ՝ ի Հոկտեմբեր ամսոյն մինչ ի Սուրբ Ծննդեանս։ Եւ ապարին նոր իմն դաւ ընդ Ե եկեղեցոյն թէ Զեկեղեցոյ մերում խարճ ի վերայ ձեր առէ՛ք և մեք ցրուիմք ի ձեզ, և կամ ի մէնջ հարկ մի՛ առնէք։ Եւ շատ օր յայս ընթացան և նոքա ոչ համարեցան իբրև զչունս։ Եւ յետոյ խանութ առ խանութ եւ տուն առ տուն երթեալ իրիցովք՝ թէ յԱստուածածին երթամք, ընդ մեզ եղիք՝ զի ի հարկէ ազատիցիմք. Եւ նոքա զիտէին զչարութիւնս նոցին, ոչ հաւատալով նոցա, բայց ըստ այսմ երիցունքն ևս ընդ նոսա զիջանէին՝ թէ կարասցեն հոգալ։ Եւ երթեալ ոմամբք յեկեղեցի Սուրբ Աստուածածնի թէ Մեր ժողովուրդն առ ձեզ կու գայ և մեք ևս եկաք ընդ ձեզ. խունկ և մոմ և ամենայն իրաւունք ի ձեզ գայ, խարճ ևս դուք ավէք։ Եւ այսու Աստուածածնցիք ի բանէս ոչ կասեցին և ոչ պարտեցան և ոչ խօսէին ընաւ ընդ նոսա. և զերիցունսն ոչ կանգնեցուցին ի դասս իւրեանց, ո՛չ փոխ և ոչ քարոզ և ոչ կարգ։ Եթէ լինէր փոխ կամ զքարոզ սկսանելն Սուրբ Սարգսոյց՝ յԱստուածածնցիք ի բերանոցն առնէին, զի ամօթով լռելով զյետին տեղն ունէին, և ողջոյն ևս ոչ առնէին ընդ նոսա։ Եւ մեք ընդ նոսա ոչ գնացաք և կամ շարժեցաք ի տեղւոջէ մերմէ, որպէս և յառաջագոյն էաք, թէպէտև շատ աղաչեցեալ լինէաք յերիցանց ծանօթից, այլ կայաք վիրաւորեալք ի նոցանէ հանապազ։ Եւ նոքա երթային և գային անդ և տեսանէին զինքեանս անհամս և զգործն անդէպ. և երիցունք այնմ եկեղեցոյն արհամարհէին զսոսա, վիրաւորէին և ծաղր առնէին, մինչ զի ոմանք յայնցանէ հիւանդանային. նաև ի չարեացն ատելիք և ամօթալիցք ի սկզբանէ մինչև ցայժմ, և անտի ևս եղեն հրաժարեալք նախատանօք, որ ինչ ոչ կարացին առնել։